

ի հարկէ, հէքիաթային կոհններուն թասերա-  
 վայրը, կըրնայ աւելի ընդարձակ սահմաններու  
 վրայ երեցած սեպուիւր նոյնքան Արեւելք և  
 Արևմուտք է անշուշտ՝ ժողովրդի հէքիաթնե-  
 րուն համար՝ Եէրան և Թիւրանը, Պարսկահողն  
 ու Հայաստանը, Հայաստանն ու Բիւզանդեան  
 կայսրութիւնը, ընդարձակ ըմբռնումով:

Կամ թէ՛ մեր վէպին յատուկ տեղեկա-  
 գրութիւնով Մասունն ու Վանը, Կապուտկոզն ու  
 Խոյայ քաղաք, Խյամթ կամ Պղնձէ-Քաղաք, Սա-  
 տուն կամ Մըսըր (Մուսուլ) ևն:

Ամփոփելով ըսենք որ, Սանասարի հիմնա-  
 դրած Սասանեց Տուրք, Իբր կուտուր և Հայրե-  
 նիք պաշտպանող քաջ ցեղ՝ պէտք է պահած  
 ըլլայ իր անունը մինչև այն օր՝ երբ բեմին վրայ  
 կ'երևի Մամիկոնեան սոհմը, չհնաց (Զանկայ  
 ջրհի) Մամգուն իշխանէն սերած:

Մամիկոնեան ցեղին՝ անգամ մը տեղացի  
 բնիկ Հանգամանքն ստանալէ ետք՝ ա'լ Սասանեց  
 Տան անունը կ'նսեմի, կ'նոյնանայ ապա Մամի-  
 կոնեան Տան հետ. և այս անգամ Հանգէս  
 կուգան Մամիկոն ցեղին գիւցազները՝ Գիվ անու-  
 նով: Այլ՝ այլևս քաջանց Տան (Քեճանց Ամիրի)  
 սպասմութիւնն է: Եւ մեր հէքիաթներու մէջ,  
 շատ տեղ, կ'իշուին Քեհանց ամիրա, Քեհանց  
 տու, Քեպլ (քաջք) ևն. յորժորումները:

Ի՛նչպիսի ցեղին պատմութիւնը՝ քաջանց  
 Տան անունով ծանչցուած, իր մէջ կ'հիւսէ սա-  
 կայն ոչ միայն Մամիկոնեան նախարարական  
 սոհմին զրոյցները, այլ աւելի ընդարձակ սահ-  
 մանով՝ նոյն իսկ Հայ-Արշակունի հարստութեան  
 մեծ մասին անգիր աղաւաղ վէպը:

Պիտի յիշէի նաև որ՝ Սասանեց Տան պատ-  
 մավէպին հետ զուգընթացաբար, կամ անկէ  
 անմատ՝ հէքիաթավէպերու մէջ, կ'յեղյեղուի  
 միշտ շինաց կամ շինուայինայ թագաւորութիւն,  
 որ նոյն է ճեմացի Մամիկոնեաններուն ցեղին  
 հետ, ու Հայրենիքին ալ գուցէ (Տեսնէ՛ «Եէրան-  
 Թիւրան» Ծմթ.՝ 372 և 478):

Ա՛ս այսչափ՝ Սանասար-Բաղդասարի ծնունդ  
 սուած ցեղերուն և բնական վայրի մասին: Բայց  
 յիշենք զեռ մէկ քանի ցուցմունքներ ալ  
 յաջորդ յօդուածաշարով մը:

Վան

21ԹՈՒՆԻ

ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐ

(Նորաստիւծ և վերջ)

ՎԱՄՐՈՅՐ ԶԱՂԱՎԱՐՔԱՆՑ

Համայր մի լով, համայր անուշ,  
 Թո՛յլ սուր քաղեմ՝ շուրթէդ քընքուշ.  
 Ո՛հ, իմ Եարաւ Հրթմանց թո՛յլ սուր  
 Ըմպել սիրոյդ ըզկոյսն աղբիւր:

Գիտեմ, որ զայդ շընորհ անբաւ  
 Չես մահացուի տըւած բընաւ.  
 Գիտեմ որ կոյս են քո շըրթունք,  
 Եւ չէ՛ վայլած ոք զիւր բուրմունքս:

Այլ և իմ սէր՝ անհամեմատ,  
 Քան զամենիցն է սիրահարստ.  
 Միթէ չէ՛ նա, ո՞ր գեղանի.  
 Մեծ այս շնորհին քո արժանի:

Նթէ Կոր ինչ զլանաս այլում,  
 Ժբխեսես և ինձ ևս, ապառնում՝  
 Ինչո՞վ պիտի յայտնես, ո՞վ կոյս,  
 Թէ քեզ հաճոյ են արտիք որւոյս:

Այոպէս ես միշտ հեծեծէի,  
 Եւ զայդ շընորհ պաղատէի.  
 Այլ զու՛ անպար միշտ թըւէիք,  
 Արցունքներուս անկարեկիր:

Եւ մինչ էի ես յուսարեկ,  
 Յանկարծ յայգուն անասայ երէկ  
 Որ ինձ մերձեալ քողածածուկ  
 Եւ փարեցար յիս սիրանցուկ:

Եւ այլ յայլմէ, հրավառ ի դող,  
 Ի վեր առի ըզկոյս քո քօզ.  
 Կարաւակեց շրթունքս յեռանդ  
 Ընդ կոյս շըրթանցդ յօղեցան անդ 1):

Ի՛նչ ըզ'այլմամբ լի էր համայր  
 Զօր քաղցեցի ես՝ վարթաբայր  
 Շըրթունքներեդ քո սիրավազ,  
 Ո՞վ Աղիւնէդ իմ կուսանազ:

Երկի հրեշտակն իսկ քոցահուր  
 Չունի շրթներ քո սիրասուր  
 Եւ ոչ գարնան այգ լուսաշող՝  
 Մարգարտափայլ քո չունի ցօղ:

Եւ երբ իմ սիրտ զըւարթախորհ  
 Կզգայ որ ե՛ս լով զայդ շընորհ  
 Վայելեցի քե՛նէ, Աղի՛կ,  
 Մընչեմ «քան զիս ո՞վ երջանիկ»:

1) Վարիանք. — Չօղեցան, կնիցան:

Մեծ այդ շնորհին ևրատապարտ,  
Էեզ կ'ընծայեմ՝ կեանքս իմ ցաւարտ:  
Ի՞նչ հուր չուրթներս պիտի պահեն  
Ձեքմ շրթներէդ բոյր խընկեղէն:

Ո՛հ, ի՞նչ անձառ ևն քաղցրութիւնք  
Ձոր հաղորդեն քո վառ շրթանք,  
} Ար մի համբոյրդ՝ ի հուր աւելն  
} Բորբոքեց զիմ՝ սիրտ և արիւն:

Ինչ երկնագրիկ գաղտնիք ունիս  
Շըրթանցըդ մէջ ըզմայլելիս:  
Ար մի համբոյր քո սրբատառք  
Ազդեց հոգւոյս կեանք բոցահուր:

Ո՛հ, թոյլ տուր մերթ, կոյս իմ անուշ,  
Առնուշ համբոյր շուրթէդ քընքուշ:  
Տե՛ս սրբան զես կ'երջանկացէ  
Քո մի համբոյր, կոյս Ազիւնէ:

**ՄԱՅՆՈՒԹԻՒՆ**

Քենէ հեռի, մըտալորեն  
Կ'անցնին իմ կեանք զշոք անհուն,  
Ինչպէս մըթին հստաց մէջէն  
Կը հոսի գետ, պըղտոր, ծրփուն:

Ոչ ստիակին անգ զայլալիկ  
Կ'ընէ զըւարթ նորա եղբւր:  
Եւ քաղցրատուր ոչ մի նոզիկ  
Ձիւր խընկաման ջընդէ յայերս:

Այսպէս և իմ ժամք և օրեր  
Յանապատիս իմ մէջ՝ անկեանք,  
Կ'անցնին արիւտ և քրգատուեր,  
Աւր շիք ձայնիդ հեշտ արձագանք:

Ձի ձայն քո քաղցր է ինձ յաւէտ  
Քան բիւր թըռչնոց աւաք քընքուշ:  
Եւ շուշ ոգւոյդ քո կենսաւետ  
Քան խընկոց բոյրն է ինձ անուշ:

Ա՛հ, ես թըռչաւ իմ, Ազիւնէս  
Ձի ի քէն զուրկ, միայն, անյոյս,  
Կը թափառիմ, հայիմ այնպէս  
Ձերդ տունէն յաւազ, անուր, անլոյս:

**ԱՂԲԻՐ ԿՈՒՍԻՆ**

Կը տեսնէ՞ք մատաղ կոյսն որ սափոր առած յուս՝  
Իբրև նոր Ռեմբկա, գէմք ծածկեալ ի սընդուս,  
Կուգայ ջուր վեր բերել յաղբերէն պողպալուն,  
Եւայի գո՛ւտար է նէ, քան իւր մայրն ըզմայլուն,  
Թէ հրեշտակ զըւարթուել:

Ճակատ իւր սըրբափայլ կը շողայ քօղին տակ:  
Աւարդք ցանուած ևն յայտեր, նըրբաւարտ է  
Հասակ:  
Չայն իւր քաղցր է կարծես գոլ երկնից ար-  
ձագանգ:  
Իւ ի ձեմ՝ ամթիղած՝ ուր շըկոյ բնու պըջրանք,  
Կ'ազդէ տո՛ւրք պատկառանք (1):

**ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԳԻՍԿԱՆՈՒԹԵՆԷ ԷՋ ՄՐ 2)**

**ԳԻՐ ԱՄԷՆ ՅԵՆ ԳՈՒՆԻ (?) ԵՒ ՅԱՐԻ**

Ա՛ն պողպատ զանակ մի, տեսունագրէ  
Ի վրայ, և ասէ զազօթս:

Մառ մի կայր ի ձեջ երկրի, որ ոչ ձեզ  
ուներ և ո՛չ տերև և ո՛չ արմատ, արծիւ մի  
նտտեալ էր ի վերայ նորա, որ ոչ գլուխ ուներ և  
ոչ թև և ոչ ոտք: Հարցունք եղեն արծիւն այն  
և ասեն՝ Ար նտտեալ ես ի ծառդ որ ոչ ձեզ  
ունի և ոչ տերև և ոչ արմատ: Ըսէ արծիւն այն  
պիղծ. երթամ նստիմ ի գլուխն մարդուն, զսին  
ուսեմ՝ և զըլեզն ծծեմ, վաշից լուսն պակա-  
նեցնեմ: Լսեցին զայն հրեշտակք և հրեշտակա-  
պետք, հրամայեցին և ասեն. Կապեմ զքեզ երեք  
հարիւր վաթսուներեք սրբովն որ ոչ հրեշտակ  
գիտեն ոչ հրեշտակապետք, բայց միայն Հայրն:  
Եւ զարձեալ ասեն. Կապեմք զքեզ երեք հար-  
իւր վաթսուներեք սրբովն որ կան ի սիրտ  
արեգական, որ ոչ հրեշտակ գիտեն և ոչ հրեշ-  
տակապետք, բայց միայն Հայրն: Եւ զարձեալ  
ասեն. Կապեմք զքեզ երեք հարիւր վաթսուներե-  
ք սրբովն որ կան ի մէջ ծովուն, որ ոչ  
հրեշտակ գիտեն և ոչ հրեշտակապետք, բայց  
միայն Հայրն: Եւ զարձեալ ասեն. Կապեմք  
զքեզ ի քնարն Դաւթի, ի մատանին Սողոմոնի  
ի տախտակն Կոբաքի, ի պատմուձան ԱՅարամի,  
ի գասատական Քրիստոսի, ի քաղցր կամի  
սուրբ Կուսին, ի շուրք բեւեռն Քրիստոսի,  
որ Տեսան արեամբն մկրտեալ էր. կապեմ  
զքեզ կապանօրն Պետրոսի և Պաւղոսի, այլա-  
կերպութեամբն Քրիստոսի, որ ի լերինն, երեք-

(1) Այսեղ ձեռագիրը կ'աւարտի. այս կերպովս զի  
չին մար կը պակտի :

2) Մեր հին ձեռագիրներուն մէջ կախարական գրակա-  
նութեան վերաբերող բազմաթիւ նիւթեր կան, որ դեռ ոչ  
հրատարակուած են ոչ ռեալմանսիրտով: Միզու հայր  
մասնագետ-բանասերներ ար մեր հին մատենագրութեան այդ  
ծիղը լուրջ բնութեան ենթարկեն՝ կը հրատակեն այդ ար-  
կեն ամենկան էջ մը: